

Միգրացիայի վերաբերյալ հիմնական տեղեկատվական աղբյուրը տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն (SSYԱՀ) է, ինչը հնարավորություն է ընձեռում տեղեկություններ ստանալ միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսության անդամների գտնվելու վայրի և մեկնելու պատճառների վերաբերյալ (վերջին հետազոտության արդյունքները հրատարակված է նաև՝ «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» ըստ 2014թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Համաշխարհային Բանկ, 2015թ., գլուխ 1 «Ժողովրդագրություն և միգրացիա», էջ 22-26, http://www.armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf):

2002-2007թթ. Ժամանակաշրջանում միգրացիոն գործընթացներում արձանագրված փոփոխությունները, միգրացիոն առանձին համակցությունների քանակական և որակական հիմնական ցուցանիշները ներկայացված են «ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույցում» (Երևան-2008, ՀՀ ԱՎԾ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, http://www.armstat.am/file/article/rep_migr_08a.pdf):

2007-2013թթ. Ժամանակաշրջանում միգրացիոն գործընթացներում արձանագրված փոփոխությունները, միգրացիոն առանձին համակարգերի հիմնական ցուցանիշները ներկայացված են «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույցում» (Երևան 2014, Միգրացիայի Միջազգային Կազմակերպություն, ՀՀ ԱՎԾ, ԵՄ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Հայռուսական/սլավոնական/ համալսարան):

Վերոհիշյալ հետազոտություններն ամբողջապես խարսխված են միջազգային միգրացիայի վերաբերյալ ՄԱԿ-ի սահմանումների և մեթոդաբանության վրա:

Հայաստանում միգրացիայի վարչական տեղեկատվական ամբողջացված աղբյուրներ դեռևս ձևավորված չեն: Ամբողջացման փուլում է գտնվում ՀՀ բնակչության պետական ռեգիստրը:

ՀՀ-ում առկա է նաև ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգը, ինչը հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալ սահմանահատումների և դրանց մասնակիցների թվաքանակի վարչական գրանցումների վերաբերյալ, սակայն համակարգը հնարավորություն չի ընձեռում այդ տեղեկությունները մշակել՝ ՄԱԿ-ի սահմանումներին համապատասխան, միգրանտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար (տես՝ էջ 109):

The main source of information on migration is the Integrated Living Conditions Survey which enables to derive information on destination country and reasons for departing of the household members at the age 15 and over who are involved in migration (the results of last survey is published in “Social Snapshot And Poverty In Armenia” based on the results of the 2013 Integrated Living Conditions Survey, NSS RA, World Bank, Yerevan - 2014, Chapter 1 “Demographics and Migration” p.18-21, http://www.armstat.am/file/article/5_poverty_2015e_2.pdf).

Changes recorded in the migration processes during the 2002-2007, the main quantitative and qualitative indicators on separate migration universes are presented in the “Report on Sample Survey of External and Internal Migration in RA” (Yerevan-2008, NSS RA, UNFPA. http://www.armstat.am/file/article/rep_migr_08e.pdf)

Changes recorded in the migration processes for 2007-2013, on the main indicators of different migration groups are presented in the «Report on Household Survey on Migration in Armenia» (Yerevan-2014, IOM, NSS RA, EU, UNECE, Eussian-Armenian (Slavonic) University).

The above mentioned surveys are entirely based on UN definitions and methodology of international migration.

Integrated Administrative Information sources of RA migration are not yet formed. The State Population Register is at the stage of completion. RA Boarder Management Information System is also available in the Republic of Armenia, which enables to obtain information about the administrative records on border crossings and the number of participants, but this system does not allow to carry out the data processing in order to get migration data according to UN definitions and methodology (see page 109).

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ 2011-2014ԹԹ.

Ըստ 2014թ. ՏՏԿԱՀ արդյունքների, տնային տնտեսությունների (տ/տ) 8.9%-ը 2011-2014թթ. ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում, որոնք կազմել են տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 10.3%: 2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 65.4%-ը (շուրջ 171 հազ. մարդ) 2014թ. դրությամբ դեռևս բացակայել են և գտնվել են՝ ՀՀ այլ մարզում, ք.Երևանում, տվյալ մարզի այլ բնակավայրում կամ այլ երկրում, 34.6%-ը (90 հազ.մարդ) վերադարձել են մեկնումներից, իսկ 0.6%-ն առաջին անգամ են ժամանել տվյալ բնակավայր (14.5 հազ.մարդ) (Աղյուսակ 7.1):

Նշված ժամանակահատվածում արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 19.6%-ի տեղաշարժերը 2014թ. դրությամբ եղել են ներհանրապետական՝ Երևան քաղաքում/ՀՀ մարզերում, 10.1%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ մնացած 70.3%-ը՝ միջպետական, որի գերակշիռ մեծամասնությունը՝ 89.6%-ը Ռուսաստանի Դաշնությունում (աղյուսակ 7.2):

Միգրացիոն գործընթացներում ներգրավված և մեկնումներից **վերադարձած** տ/տ անդամներից՝ 74.3%-ի բացակայության տևողությունը կազմել է մինչև մեկ տարի (այդ թվում՝ 31.2%-ի բացակայությունը կազմել է երեք ամիս և պակաս), իսկ 25.7%-ինը՝ մեկ տարի և ավելի (աղյուսակ 7.3): Ընդ որում, վերադարձածների շուրջ 70% Ռուսաստանի Դաշնությունից է:

2011-2014թթ.-ին իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2014թ.-ի դրությամբ դեռևս **չվերադարձած**, 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 14.3%-ի բացակայության տևողությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմել է 3 ամիս և պակաս, 51.1%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 34.6%-ինը՝ մեկ տարի և ավելի (աղյուսակ 7.4):

2011-2014թթ. 3 ամիս և ավելի ժամկետով իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2014թ.-ի դրությամբ, դեռևս չվերադարձած 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 19.5 %-ը գտնվել են ՀՀ տարածքում՝ ք.Երևանում, ՀՀ մարզերում, 13.7%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ 63.7%-ի գտնվելու վայրը եղել է Ռուսաստանի Դաշնությունը, 3.1 %-ինը՝ ԱՊՀ այլ երկրներ, ԱՄՆ, Կանադա կամ այլ երկիր (աղյուսակ 7.5):

2011-2014թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ արտաքին միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014թ. դրությամբ դեռևս արտերկրներից

MIGRATION PROCESSES IN 2011-2014

According to ILCS 2014 findings, some 8.9% of households (h/h) were involved in external and internal migration processes over the period of 2010-2014; these comprised 10.3% of household members of the age 15 years and above. Among household members of the age 15 years and above, who were involved in migration processes over the period of 2011-2014, some 65.4% (around 171 thousand persons) were still absent from the household as of 2014 and resided either in other regions of the country, in Yerevan, in other communities within their region, or in other countries, whereas 34.6% (90 thousand persons) had returned home, and 0.6% (14.5 thousand persons) have arrived in that locality for the first time (Table 7.1).

Among households with members of the age 15 years and above, who were involved in migration processes over that period, in 2014 some 19.5% were in internal migration (Yerevan/other regions), 10.1% in NKR and 70.3% migrated to other countries, with the overwhelming majority of 89.6% migrated to the Russian Federation (Table 7.2).

Among household members involved in migration processes who **returned** from migration, some 74.3% were absent for less than 1 year (of which 31.2% for less than 3 months), and 25.7% – for one year and more. At that 70% of migrants who returned back were from Russian Federation (Table 7.3).

Among household members of age 15 and above, who left the place of their permanent residence during 2011-2014 and did not return as of 2014, 14.3% were absent for 3 months or less, 51.1% for 4-12 months, and 34.6% – for one year and more (Table 7.4).

Among household members of age 15 and above, who left the place of their permanent residence during 2011-2014 for 3 months and more and had not returned as of 2014, some 19.5% resided within the country – in Yerevan or in the regions of the country, 13.7% in NKR, 63.7% in the Russian Federation, 3.1% in other CIS countries, USA, Canada or other foreign countries (Table 7.5).

Household members of age 15 and above, who were involved in external migration processes (excluding intra-country movements) over the period of 2010-2014 for 3 months and more and had not returned as of 2014,

չվերադարձած տ/տ անդամների (առանց ներհանրապետական տեղաշարժերի) շուրջ 60%-ի չչ-ից բացակայելու տևողությունը կազմել է 4-12 ամիս, իսկ 40 %-ինը՝ մեկ տարի և ավելի:

Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության, ուսումնասիրվող ժամանակահատվածում (2011-2014թթ.) արտաքին միգրանտները կազմել են հաշվառման ժամանակ երկրից 3 ամիս և ավելի ժամկետով բացակայած տ/տ անդամների (չվերադարձածների)՝ 97%-ը (մոտ 113 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ միգրանտները՝ 4-12 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (որում չեն ներառվել՝ հանգստի, ընկերներին/բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են արտաքին միգրանտների համակցության 60%-ը, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 40%-ը:

Հետազոտության արդյունքներով 2011-2014թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ չչ-ից մեկնած և 2014թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած (ներառյալ կարճաժամկետ միգրանտները) 15 և բարձր տարիքի տ/տ անդամ միգրանտների միջին տարեկան գնահատականը կազմել է շուրջ 28.2 հազ. մարդ:

around 60% were absent from the country for 4-12 months, and 40% – for one year and more.

According to the UN methodology, within the reporting period (2011-2014), external migrants constituted 97% (around 113 thousand persons) of those household members who, by the record date, were absent from (had not returned to) the country for a period of three months and more. Among them, short-term migrants with a duration of absence for 4-12 months (except for those having left for recreation, visits to friends/relatives, holidays, business tips, medical treatment or religious pilgrimage) comprised 60%, and long-term migrants with a duration of absence for one year and more comprised 40%.

According to survey findings, the average annual estimated number of household members of the age 15 years and above, who were involved in migration processes over the period of 2011-2014 for 3 months and more and has not returned (including short-term migrants) as of 2014, totaled around 28.2 thousand.

Աղյուսակ 7.1. 2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամներն ըստ ք.Երևանի/չչ մարզերի և ներգրավվածության տեսակի

Table 7.1. Household Members at Age 15 and Above Involved in Migration Process over 2011-2014, by Yerevan/RA Marzes and Type of Involvement (%)

Մարզեր	2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավվածությունը/Involvement in Migration Process during 2011-2014			Ընդամենը Total	Marzes
	մեկնել են և չեն վերադարձել Departed and didn't return	մեկնել են և վերադարձել Departed and returned	առաջին անգամ են ժամանել Arrived for the first time		
ք. Երևան	17.6	21.1	79.5	22.0	c. Yerevan
Արագածոտն	8.4	1.3	0.0	5.6	Aragatsotn
Արարատ	10.4	12.3	6.3	10.8	Ararat
Արմավիր	6.0	1.5	0.0	4.2	Armavir
Գեղարքունիք	9.7	11.6	0.0	9.8	Gegharkunik
Լոռի	12.7	16.5	9.6	13.8	Lori
Կոտայք	9.1	12.6	4.5	10.0	Kotaiik
Շիրակ	16.0	9.7	0.0	13.1	Shirak
Սյունիք	3.3	2.5	0.0	2.9	Syunik
Վայոց ձոր	2.4	3.2	0.0	2.5	Vayots Dsor
Տավուշ	4.5	7.7	0.0	5.3	Tavush
չչ - ընդամենը	100	100	100	100	Total

Աղյուսակ 7.2 2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տ/տ անդամներն ըստ մեկնելու/վերադառնալու պատճառների և գտնվելու/վերադառնալու վայրի, 2014թ.

Table 7.2 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2011-2014, by Reasons for Departure/Return and Destination of Departure /Return, 2014 (%)

Գտնվելու /վերադառնալու հիմնական պատճառը Main reason for departure/ return	Գտնվելու/վերադառնալու վայրը/ Place of destination/return								
	ք.Երե- վան Yerevan	ՀՀ մար- զեր RA Regions	ԼՂՀ NKR	ՌԴ Russian Federa- tion	ԱՊՀ այլ երկիր Other CIS country	Եվրո- պական երկիր European country	ԱՄՆ և Կա- նադա, USA and Canada	Այլ Other	Ընդա- մենը Total
1. Աշխատելը / Employment	3.1	2.2	0.9	90.2	1.8	1.0	0.6	0.2	100
2. Աշխատանք փնտրելը/ Search for work	8.8	16.1	0.6	65.9	2.1	2.1	3.6	0.8	100
3. Ընտանեկան/ Family circumstances	17.6	14.1	0.0	29.9	0.0	19.4	2.5	16.5	100
4. Բնակությունը /To settle for residence	6.1	4.2	0.2	69.6	10.6	8.7	0.6	0.2	100
5. Մասնավոր այց բարե- կամների, ընկերների / Visit friends/ relatives	0.0	0.0	0.0	24.3	53.8	20.3	0.0	1.6	100
6. Զբոսաշրջություն/ Tourism	66.1	22.1	0.0	7.4	0.0	1.4	3.0	0.0	100
7. Գործնական/Business	1.7	3.5	1.4	91.7	1.5	0.2	0.0	1.4	100
8. Աշխատանքի ավարտ/ End of employment	0.0	46.0	0.0	54.0	0.0	0.0	0.0	0.0	100
9. Բուժում/առողջական Medical treatment/health reasons	6.8	4.3	0.0	81.1	0.0	7.9	0.0	0.0	100
10. Այլ/ Other	4.6	35.6	43.4	3.9	2.1	0.9	0.0	44.5	100
Ընդամենը / Total	7.4	12.2	10.1	63.0	2.1	1.8	0.8	2.6	100

Աղյուսակ 7.3 2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014թ. դրությամբ վերադարձած տ/տ 15 և բարձր տարիքի անդամների բաշխումն՝ ըստ վերադառնալու պատճառի և բացակայության տևողության,

Table 7.3 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2011-2014 who Returned Home as of 2014, by Reason of Return and Duration of Absence (%)

Վերադառնալու հիմնական պատճառը/ Main reason for returning	Բացակայության տևողությունը/ Duration of absence			Ընդամենը/ Total	
	≤3ամիս/ months	4 -11ամիս/ months	≥ 12 ամիս / months		
1.Աշխատելը/ Employment		31.5	27.9	23.4	27.9
2.Աշխատանք փնտրելը/ Search for work		8.3	12.0	22.3	13.5
3. Ընտանեկան / Family circumstances		0.1	4.6	0.7	2.2
4. Բնակությունը /To settle for residence		8.5	8.9	15.4	10.5
5. Մասնավոր այց բարեկամների, ընկերների / Visit friends/ relatives		1.6	2.7	3.2	2.5
6. Զբոսաշրջություն / Tourism		8.3	4.0	0.7	4.5
7. Գործնական / Business		32.3	24.7	12.0	23.8
8. Աշխատանքի ավարտ/ End of employment		0.8	0.0	0.0	0.2
9. Բուժում/առողջական Medical treatment/health reasons		1.5	0.8	0.8	1.0
10. Այլ/ Other		7.0	14.4	21.5	13.9
Ընդամենը/ Total		100	100	100	100

Աղյուսակ 7.4 Հայաստան.2011-2014թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014թ. դրությամբ դեռևս չվերադաձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն՝ ըստ բացակայության տևողության և պատճառի

Table 7.4 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2011-2014, who did not Return back as of 2014, by Duration of Absence and Reasons for Migration (%)

Մեկնելու հիմնական պատճառը/ Main reason for migrating	Բացակայության տևողությունը/ Duration of absence			Ընդամենը/ Total
	≤3ամիս/ months	4 -11ամիս/ months	≥ 12 ամիս / months	
1. Աշխատելը/ Employment	66.9	69.5	56.0	64.5
2. Աշխատանք փնտրելը/ Search for work	6.1	2.7	7.1	4.7
3. Ընտանեկան / Family circumstances	0.0	0.1	1.4	0.5
4. Բնակությունը /To settle for residence	4.8	0.3	0.2	0.9
5. Մասնավոր այց բարեկամներին, ընկերներին / Visit friends/ relatives	0.5	0.0	0.0	0.1
6. Զբոսաշրջություն/ Turism	9.4	5.1	4.3	5.4
7. Գործնական / Business	0.5	0.1	0.0	0.1
8. Բուժում/առողջական Medical treatment/health reasons	2.9	0.3	0.7	0.8
9. Այլ/ Other	8.9	21.9	30.4	23.0
Ընդամենը	100	100	100	100

Աղյուսակ 7.5 2011-2014թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2014թ. դրությամբ դեռևս չվերադաձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներն ըստ մեկնելու պատճառի և գտնվելու վայրի

Table 7.5 Household Members of Age 15 and Above Involved in Migration Processes over 2011-2014 for Three Months and More, Who did not Return as of 2014, by Reason of Migration (%)

Մեկնելու հիմնական պատճառը/ Main reason for migrating	Գտնվելու վայրը/ Place of destination								Ընդամենը/ Total
	ք.Երեվան Yerevan	ՀՀ մարզեր RA Regions	ԼՂՀ NKR	ՌԴ Russian Federation	ԱՊՀ այլ երկիր Other CIS country	Եվրոպական երկիր European country	ՄԱՆ և Կանադա USA and Canada	Այլ Other	
1. Աշխատելը/ Employment	3.0	1.8	0.7	92.1	0.7	1.4	0.2	0.1	100
2. Աշխատանք փնտրելը/ Search for work	0.8	8.4	0.0	75.7	5.1	4.9	5.1	0.0	100
3. Ընտանեկան / Family circumstances	0.0	0.0	0.0	36.1	0.0	63.9	0.0	0.0	100
4. Բնակությունը /To settle for residence	0.0	0.0	0.0	100	0.0	0.0	0.0	0.0	100
5. Գործնական / Business	0.0	0.0	0.0	100	0.0	0.0	0.0	0.0	100
6. Բուժում/առողջական Medical treatment/ health reasons	22.8	14.4	0.0	36.3	0.0	26.5	0.0	0.0	100
7. Այլ/ Other	5.7	41.6	52.3	0.3	0.0	0.1	0.0	0.0	100
Ընդամենը/ Total	7.2	12.3	13.7	63.7	0.7	1.8	0.5	0.1	100

Աղյուսակ 7.6 ՀՀ ժամանումներն ու մեկնումները 2010-2014թթ.¹

Table 7.6 RA Arrivals and Departures in 2010-2014¹

/Մարդ/	2010	2011	2012	2013	2014	/person/
ՀՀ ընդամենը						RA Total
Ժամանել են	32 500	30 900	29 300	19 800	17 400	Arrived
Մեկնել են	69 800	59 400	38 700	44 200	39 200	Departed
Միգրացիայի մնացորդը	-37 300	-28 500	-9 400	-24 400	-21 800	Net migration
Որից միջազգային միգրացիա	Of which – International migration					
Ժամանել են	18 300	17 800	19 500	12 300	10 700	Arrived
Մեկնել են	55 600	46 300	28 900	36 700	32 500	Departed

<p>Մշտական բնակության երկրի, երկարաժամկետ միջազգային միգրանտի և կարճաժամկետ միջազգային միգրանտի սահմանումներ*</p> <p>Մշտական բնակության երկիր – երկիրը, որում անձն ապրում է, այսինքն, որում նա ունի ապրելու տեղ և որտեղ նա սովորաբար ծախսում է օրվա հանգստի ժամերը: Ժամանակավոր արտասահման ճամփորդությունները՝ հանգստի, արձակուրդի, ընկերներին և մտերիմներին այցելությունների նպատակով, գործուղման, բուժման կամ կրոնական ուխտագնացության, չեն փոխում անձի մշտական բնակության երկիրը:</p> <p>Երկարաժամկետ միգրանտ – անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշարժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն մեկ տարի (12 ամիս) ժամկետով, այսինքն, նշանակետ երկիրը նրա համար դառնում է նոր մշտական բնակության երկիր: Մեկնման երկրի տեսանկյունից՝ մեկնող անձը համարվում է երկարաժամկետ արտագաղթող (եմիգրանտ), իսկ ժամանման երկրի համար՝ տվյալ անձը կհամարվի երկարաժամկետ ներգաղթող (իմիգրանտ):</p> <p>Կարճաժամկետ միգրանտ – անձը, ով իր մշտական (սովորաբար) բնակության երկրից տեղաշարժվում է մեկ այլ երկիր՝ առնվազն 3 ամիս, բայց մեկ տարուց (12 ամիս) պակաս ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղաշարժը պայմանավորված է հանգստի, արձակուրդի, ընկերներին և մտերիմներին այցելությունների, գործուղման, բուժման կամ կրոնական ուխտագնացության նպատակով: Միջազգային միգրացիայի վիճակագրության նպատակով, կարճաժամկետ միգրանտների մշտական բնակության երկիրը՝ այնտեղ գտնվելու ժամանակաընթացքում, կհամարվի նշանակման երկիրը:</p> <p>*«Рекомендации по Статистике Международной Миграции», 1-ое пересмотренное издание, ООН, Нью-Йорк, 1998, стр.15 http://www.armstat.am/file/doc/99475943.pdf</p>	<p>Definition of country of usual residence, of long-term international migrant and of short-term international migrant*</p> <p>Country of usual residence – The country in which a person lives, that is to say, the country in which he or she has a place to live where he or she normally spends the daily period of rest. Temporary travel abroad for purposes of recreation, holiday, visits to friends and relatives, business, medical treatment or religious pilgrimage does not change a person's country of usual residence.</p> <p>Long-term migrant – A person who moves to a country other than that of his or her usual residence for a period of at least a year (12 months), so that the country of destination effectively becomes his or her new country of usual residence. From the perspective of the country of departure the person will be a long term emigrant and from that of the country of arrival the person will be a long-term immigrant.</p> <p>Short-term migrant – A person who moves to a country other than that of his or her usual residence for a period of at least 3 months but less than a year (12 months) except in cases where the movement to that country is for purposes of recreation, holiday, visits to friends and relatives, business, medical treatment or religious pilgrimage. For purposes of international migration statistics, the country of usual residence of short-term migrants is considered to be the country of destination during the period they spend in it.</p> <p>* «Recommendations on Statistics of International Migration», Revision 1, UN, New York, 1998, p. 10 http://www.armstat.am/file/doc/99475948.pdf</p>
--	---

¹ 2010-2011թթ. վերահաշվարկված են ՀՀ 2011թ. մարդահամարի, 2012թ.-ից՝ գնահատված են ՏՏԿԱՀ –ի արդյունքների հիման վրա 2010-2011 are recalculated based on RA 2011 Population Census results, since 2012 – estimated by the results of ILCs.

Աղյուսակ 7.7 ՀՀ կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրի և կացության կարգավիճակի տեսակի, 2014թ.
 Table 7.7 Distribution of Foreigners Gained RA Residency Status by Country of Citizenship and Type of Residency, 2014

Քաղաքացիության երկիրը	Ընդամենը Total	Այդ թվում՝ ըստ կացության կարգավիճակների Of which by type of residency status			Մայր/person <i>Country of citizenship</i>
		Ժամանակավոր Temporary	Մշտական Permanent	Հատուկ Special	
Ընդամենը	4 723	3 228	1 104	391	Total
Իրանի Իսլամական Հանրապետություն	934	710	127	97	Islamic Republic of Iran
Հնդկաստան	695	676	19	0	India
Ռուսաստանի Դաշնություն	668	290	372	6	Russian Federation
Սիրիա	411	137	103	171	Syria
Վրաստան	280	150	121	9	Georgia
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	263	153	91	19	United States of America
Ուկրաինա	232	133	99	0	Ukraine
Իսրայել	140	135	5	0	Israel
Լիբանան	87	42	29	16	Lebanon
Ֆրանսիա	75	50	20	5	France
Իսպանիա	71	69	2	0	Spain
Իտալիա	52	48	4	0	Italy
Թուրքմենստան	49	39	8	2	Turkmenistan
Գերմանիա	47	39	8	0	Germany
Այլ երկրներ	719	557	96	66	Other countries
<i>Ընդամենը կացության կարգավիճակ ստացածներին</i>		<i>Of total gained residency status:</i>			
ԱՊՀ երկրներ	1 358	672	625	61	CIS countries
ԵՄ երկրներ	422	346	69	7	EU countries
ԱՅԼ երկրներ	2 943	2 210	410	323	Other countries

Աղյուսակ 7.8 Ապաստան հայցող անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության, 2014թ.
 Table 7.8 Asylum Seekers Disaggregated by Sex, Age Group and Country of Citizenship, 2014

Քաղաքացիության երկիրը <i>Country of Citizenship</i>	Ընդամենը ապաստան հայցող անձինք Total asylum seekers	այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի և սեռի/ of which by age groups and sex							
		0-17		18-34		35-64		65+	
		Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female	Տղա- մարդ/ Male	Կին/ Female
Ընդամենը	226	28	28	46	43	37	31	6	7
<i>այդ թվում՝ ըստ քաղաքացիության երկրի</i>									
Իրանի Իսլամական Հան- րապետություն / Islamic Republic of Iran	27	1	1	8	4	8	3	2	-
Իրաք / Iraq	19	4	2	4	3	3	2	1	-
Սիրիա / Syria	50	3	3	15	9	8	7	1	4
Ուկրաինա / Ukraine	114	17	21	17	24	14	17	2	2
Այլ երկիր/ Other country	16	3	1	2	3	4	2	-	1

Աղյուսակ 7.9 Փախստական ճանաչված կամ այլևս փախստական չհամարվող անձանց¹ բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրի, 2014թ.

Table 7.9 Distribution of Persons Recognized as a Refugee or no Longer Recognized as Refugee Disaggregated by Sex, Age Age Group and Country of Citizenship, 2014

Քաղաքացիության երկիրը <i>Country of Citizenship</i>	Ընդամենը Total	այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի և սեռի / of which by age groups and sex									
		0-13		14-17		18-34		35-64		65+	
		Տղամարդ/ Male	Գին/ Female	Տղամարդ/ Male	Գին/ Female	Տղամարդ/ Male	Գին/ Female	Տղամարդ/ Male	Գին/ Female	Տղամարդ/ Male	Գին/ Female
Շնորհվել է փախստականի կարգավիճակ Granted refugee status	136	18	17	3	1	26	24	18	18	4	7
<i>այդ թվում՝ ըստ քաղաքացիության երկրի</i> <i>of which by country of citizenship</i>											
Իրաք /Iraq	22	4	3	1	1	3	3	3	3	1	-
Ուկրաինա/Ukraine	43	6	9	1	-	4	11	5	6	1	-
Սիրիա/ Syria	64	6	4	1	-	18	9	8	9	2	7
Այլ երկիր/ Other country	7	2	1	-	-	1	1	2	-	-	-
Դադարեցվել է փախստականի կարգավիճակը Refugee status ceased	17	-	-	-	-	8	2	1	3	-	3

¹Միգրացիոն պետական ծառայության կամ դատական մարմինների կողմից կայացված վերջնական որոշումների հիման վրա/ Based on the final decisions of State Migration Service or Judicial authorities.